

Լիանա Մամյան

ԹՈՒՐԷ-ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈՐԲԻՆ ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՀԱԽՆՂՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Բանալի բառեր - թուրք-աղբեջանական լոբբինգ, լոբբիստական գործունեություն, Սփյուռք, ԱՄՆ, հայկական շահախնդրություններ, Հայոց ցեղասպանություն, Արցախ, 907-րդ բանաձև:

Թուրքերի առաջին միգրացիոն հոսքը դեպի ԱՄՆ սկսվել է XIX դարի երկրորդ կեսից, մասնավորապես 1870 թվականից, երբ Օսմանյան կայսրության թուլացման և սոցիալ-տնտեսական ճգնաժամի պատճառով սկիզբ է առնում բնակչության զանգվածային արտահոսքի երևույթը:

Ըստ շրջանառության մեջ գտնվող առկա հաշվարկների՝ ներկայումս ԱՄՆ-ում բնակվող մոտ կես միլիոն թուրքերից 50-80 հազարն է ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ և Թուրքիայի երկքաղաքացի¹: 1949 թ. հունիսի 29-ին Նյու Յորքում թուրք ութ քաղաքացի հիմնում են «ԱՄՆ թուրքական համայնք»՝ ATS (American Turkish Society) կազմակերպությունը:

Վերջին տարիներին, Թուրքիան և ԱՄՆ-ում բնակվող թուրքերը ուժեղացրել են ջանքերը՝ հակազդելու հակադիր լոբբիստական կառույցներին: 2008 թ. փետրվարի տվյալներով, ԱՄՆ-ի առնվազն 27 նահանգում գործում է շուրջ 180 թուրքական հասարակական կազմակերպություն: Առավելագույն թվով թուրքական կառույցներ գործում են Նյու Յորքում՝ 27, Վաշինգտոնում՝ 18, Նյու Ջերսիում՝ 17 և Կալիֆորնիայում՝ 15: Թուրքական միություններ են գործում նաև ԱՄՆ հայաշատ այլ նահանգներում:

Այսօր Միացյալ Նահանգներում գործում է թուրքական երկու միություն, որոնցում ընդգրկված են տասնյակ հասարակական, մշակութային, գիտակրթական կազմակերպություններ: Այս երկու միությունները յուրօրինակ «հովանու» դեր են կատարում մյուս նմանատիպ կառույցների համար: Այդ երկու կառույցներն են՝ ATAA-ն (Assembly of Turkish-American Associations) և FTAA (Federation of Turkish American Associations):

ATAA-ն (Assembly of Turkish-American Associations-թուրք-ամերիկյան միությունների համագումար) առավել ծավալված և կայացած կազմակերպություն է: ATAA-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում: Կառույցը հիմնադրվել է 1967թ. Վաշինգտոնում գործող ամերիկա-թուրքական ասոցիացիայի և Մերիլենդի ամերիկա-թուրքական միության կողմից: Ներկայում ATAA-ն միավորում է 65 հասարակական, մշակութային, գիտակրթական կառույցներ, որոնցից 60-ը՝ Միացյալ Նա-

¹ St'u The Turkish lobby dilemma in the United States as a case study, www.lobicilik.com:

հանգևերում, 2-ը՝ Կանադայում, 3-ը՝ բուն Թուրքիայում (Ստամբուլ, Անկարա և Իզմիր)¹:

2007թ. ATAA-ն պառակտվում է, և կառույցից անջատված մի խումբ գործիչներ հիմնում են «Turkish Coalition of America» («Ամերիկայի թուրքական միություն») նոր լրբիստական կազմակերպությունը, որը կազմակերպում է թուրք երիտասարդ քաղաքական գործիչների պրակտիկան ԱՄՆ-ի Կոնգրեսում, դրամաշնորհներ տրամադրում թուրք ուսանողներին, իրականացնում քարոզչական աշխատանքներ, կայքէջում վերահրատարակում ԱՄՆ մամուլում լույս տեսնող թուրքանպաստ հոդվածներ, նախաձեռնում հասարակության հետ աշխատանքներ ԱՄՆ-ի թուրքական համայնքի շրջանակում: Մասնավորապես, նշված կառույցի պատվերով «Google» որոնման ցանցում տեղադրվել են վճարովի հղումներ, և Հայաստանի, Հայոց պատմության Հայոց ցեղասպանության վերաբերյալ որոնում կատարելիս, որպես առաջին հասցե, ներկայանում են թուրքական մերժողական կայքերը: ԱՄՆ-ի Հայ դատի գրասենյակի նախաձեռնությամբ «Google»-ը վերացնում է թուրքական մերժողական կայքերը, իսկ «Google»-ի մամուլի խոսնակը հայտարարում է. «Կայքէջը չի կարող թույլատրել կայքեր, որոնք առաջարկում են վերանայել պատմությունը»: Ֆոքս Նյուզ հեռուստատեսիլին «Google»-ի աշխատակիցը հայտարարել է. «Կարո՞ղ եք պատկերացնել, որ տեղադրվեր նացիստական խմբի հայտարարություն, որում Հոլոքոստը բնութագրվեր որպես միֆ»²:

Միաժամանակ, թուրքական կոալիցիան համակարգված արշավ է սկսել Հայոց ցեղասպանության թեման Կալիֆորնիայի ուսումնակրթական ծրագրերում ներառելու դեմ³: Թուրքական կոալիցիային կից գործում է Թուրքական կոալիցիա-ԱՄՆ-Քաղաքական գործողությունների կոմիտե, որը ստեղծվել է 2007 թվականի փետրվարին. հիմնական նպատակը Հայոց ցեղասպանության ճանաչումը կասեցնելն է:

Համաամերիկյան ձևաչափով մյուս թուրքական կառույցը FTAA-ն է (Federation of Turkish American Associations - Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համադաշնություն), որը ստեղծվել է 1956 թվականին: Կենտրոնակայանը Նյու Յորքում է: Համադաշնությունը ներառում է 37 կազմակերպություն, որոնց մեծ մասը մտնում է նաև ATAA-ի մեջ⁴:

ԱՄՆ-ում թուրքական շահերը ներկայացնելու գործում կարևոր դեր է կատարում թուրքական համայնքի հարցերով զբաղվող կոնգրեսական հանձնախումբը, որը ստեղծել են ԱՄՆ կոնգրեսականներ Ռոբերտ Վեբսլերը, Էդ Ուայթֆիլդը և Քեյ Գրենզերը՝ 2001 թվականի մարտին: Հանձնախումբը հիմնականում ներգրավված է ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների, Միացյալ Նահանգների թուրքական համայնքի և Թուրքիայի շահերի պաշտպանության խնդիրներում:

Թուրքիայի կառավարությունը և ԱՄՆ-ի թուրքական համայնքը սերտ շփումներ ունեն լրբիստական հեղինակավոր կազմակերպությունների հետ, որոնք նպաստում են երկրի օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում թուրքական շահերի

¹ Տե՛ս <http://www.ataa.org/about/>:

² Տե՛ս Turkish Group accuses Google of limiting free speech, Foxnews, 11.08.2009, <http://www.foxnews.com/politics/2009/08/11/turkish-group-charges-google-limiting-free-speech-suspending-ads/>:

³ Տե՛ս http://www.turkishcoalitionofamerica.org/action_ca.html:

⁴ Տե՛ս <http://www.taldf.org/contact.html>:

ներկայացմանը: ԱՄՆ-ում թուրքական շահերը պաշտպանում են այնպիսի հեղինակավոր լրբբիստական կազմակերպություններ, ինչպիսիք են «Նեուսներ Զոմուսի-բեյնս», «Ֆլեյշման Զիլլարդ», «Լիվինգստոն Գրուպ», «Զոնս Վոլբեր» և «Դինոլո Սթրատեջիս» ընկերությունները: Դրանց աշխատանքները կոորդինացնում է ԱՄՆ-Թուրքիա բարեկամության միջխորհրդարանական խմբի համանախագահ, դեմոկրատ Ռոբերտ Վեբսլերը¹, որը ակտիվ գործունեություն է ծավալում հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ուղղությամբ և բազմիցս կոչ է արել Թուրքիային ամեն կերպ վավերացնել հայ-թուրքական արձանագրությունները: Որոշ տվյալների համաձայն՝ 2000 թվականից սկսած, ընկերությունը Անկարայից պաշտոնապես ստացել է ավելի քան 13 մլն դոլար՝ ԱՄՆ կառավարությունում լրբբիստական հակահայ գործունեություն ծավալելու նպատակով:

ԱՄՆ-ում հակահայ լրբբիստական գործունեությամբ աչքի է ընկնում «Լիվինգստոն Գրուպ» ընկերությունը, որը սերտորեն համագործակցում է Թուրքիայի կառավարության, տեղի թուրքական համայնքի և թուրքական լրբբիստական այլ խմբերի հետ:

Բացի վերոնշյալներից ԱՄՆ-ում գործում են թուրքական լրբբիստական ու հասարակական այլ կառույցներ. դրանցից է թուրքական հետազոտությունների ինստիտուտը (ITS), որը զբաղվում է գերազանցապես ԱՄՆ-ի գիտակրթական հաստատություններում թուրքագիտական ամբիոնների հիմնադրման աշխատանքով, ինչև, ըստ թուրք վերլուծաբանի և կառույցի կայքի, իրականացվում է Թուրքիայի կառավարության հովանավորությամբ: ԱՄՆ-ում գործող լրբբիների ոլորտում մասնագիտացող թուրք փորձագետ Թայյար Արըն Նշում է, որ ITS-ը Միացյալ Նահանգների տարբեր համալսարաններում ամբիոնների հիմնադրման համար գործակցում է Թուրքիայի կառավարության հետ: Թուրքիայի կառավարության ջանքերով ամբիոններ են հիմնադրվել Ջորջթաունի, Փրինսթոնի, Զարվարդի, Չիկագոյի, Ինդիանայի, Փորթլանդի համալսարաններում: Բացի այդ, Կալիֆորնիա, Կոլումբիա, Միչիգան, Նյու Յորք, Օհայո, Փենսիլվանիա, Տեխաս, Յութա Նահանգների և Վաշինգտոնի համալսարաններում բացվել են թուրքագիտական կենտրոններ և բաժիններ:

Անկարան անմիջականորեն աշխատում է սեփական լրբբիստական կազմակերպությունների հետ, հարկ եղած դեպքում, նաև՝ ուղղորդում: Զավելենք, որ ITS-ի բյուջեն մինչև վերջերս կազմում էր տարեկան 2 միլիոն դոլար, ինչը դժվար թե գոյանար համայնքային նվիրատվությունների հաշվին և վկայում է Թուրքիայի պետական գանձարանից ուղղակի հատկացումների հավանականության մասին: ITS-ի աշխատանքի արդյունքում ԱՄՆ-ում թուրքագիտական թեմայով տասնյակ աշխատություններ են հրատարակվել, որոնք առնչվում են Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, տնտեսությանը և պատմությանը²:

Ըստ ԱՄՆ-ի Արդարադատության նախարարության՝ լրբբիստական խմբերի վերաբերյալ 2008 թվականի տարեկան հաշվետվության, նույն թվականին Թուրքիան դասվել է ԱՄՆ Կոնգրեսում իր շահերն առավել հաճախակի լրբբիների ենթարկած երկրների շարքում (2268 անգամ): Չեկոսլոյի տվյալներով՝ Թուրքիան այլ երկրների

¹ St' u Турция один из самых активных лоббистов в США, <http://www.lobbying.com.ua/news/>:

² St' u Նահապետյան Զ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Երևան, 2010, էջ 27:

ցանկում զբաղեցրել է 4-րդ տեղը՝ 4,2 մլն դոլար, և զիջել է միայն Միացյալ Արաբական Էմիրություններին (11 մլն դոլար), Մեծ Բրիտանիային (6 մլն դոլար) և Ճապոնիային (4,23 մլն դոլար):

Թուրքական շահերը պաշտպանող լոբբիստներն առավել ակտիվ գործունեություն են ծավալել 2007 թ. տարեվերջին, երբ Կոնգրեսում քննարկվում էր Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման օրինագիծը: Այդ ժամանակ մեկ ամսվա ընթացքում թուրքական լոբբիստները 673 հանդիպում են կազմակերպում կոնգրեսականների ու հրեական լոբբինգի ներկայացուցիչների հետ: ԱՄՆ թուրքական լոբբիստական խմբերն իրենց գործունեությունը ծավալում են գլխավորապես երկու հիմնական ուղղություններով¹.

1. Հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերություններ, որը ենթադրում է հակազդել ԱՄՆ Կոնգրեսում և գործադիր իշխանությունում հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի շուրջ ցանկացած քննարկման, բանաձևի կամ որոշման գործընթացին, խոչընդոտել ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ համագործակցության խորացմանն ու ՀՀ-ին և ԼՂՀ-ին ցուցաբերվող ԱՄՆ ֆինանսական աջակցության հարցերին, հակազդել ու սահմանափակել ԱՄՆ հայկական լոբբինգն ու նրա ազդեցությունը ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների ուղղությամբ:
2. ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններ, որը ենթադրում է ամրապնդել ԱՄՆ-Թուրքիա ռազմաքաղաքական, ռազմավարական համագործակցությունը, ապահովել Միացյալ Նահանգներից Թուրքիային տրամադրվող ռազմատեխնիկական, տնտեսական և այլ տեսակի աջակցությունը:

ԱՄՆ-ում թուրքական լոբբինգը առանձնապես ակտիվանում է 2010 թվականի մարտի սկզբներին՝ կապված ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում մարտի 4-ին քվեարկության դրված 252-րդ բանաձևի հետ, ինչի արդյունքում կենտրոնացվում են թուրքական շահերը ներկայացնող և պաշտպանող ամերիկյան խոշոր ընկերությունների ռեսուրսները: Նշենք, որ բանաձևի քվեարկության նախօրեին ԱՄՆ-ի ավիացիոն և պաշտպանական ոլորտի մի շարք կորպորացիաներ փետրվարի 26-ին նամակով դիմում են Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Յովարդ Բերմանին և հանձնաժողովի անդամներին՝ հորդորելով չընդունել ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը, որը, ըստ նրանց, կարող է վտանգել ամերիկյան արտահանումները Թուրքիա: Ամերիկյան այս կորպորացիաներն իրենց համատեղ նամակում նշում են, որ օրինագծի ընդունումը կվատթարացնի ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները և ռիսկի կենթարկի ամերիկյան աշխատատեղերը. «ՆԱՍՕ-ի նշանակալից դաշնակցին ու առևտրային գործընկերոջն օտարելը բացասական հետևանքներ կունենա ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերի, արտահանումն ու աշխատատեղերի ստեղծումը խթանելու ջանքերի վրա»²:

Ամերիկյան հողվածներից մեկում նշվում է, որ Թուրքիան համարվում է Միջին Արևելքում միակ երկիրը, որ կարողանում է արդյունավետ հարաբերություններ հաս-

¹ Տե՛ս http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4799:

² Տե՛ս ԱՄՆ ավիացիոն և ռազմական արդյունաբերության հսկաները կոչ են անում մերժել ցեղասպանության բանաձևը, <http://www.armtown.com/news/am/rfe/20100303/1973398>:

տատել հարևան երկրների հետ: ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների սերտացումը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ վերջինս ազդեցություն ունի Բալկաններում, Սև ծովում և Կովկասյան տարածաշրջանում, այն նաև միաժամանակ կարևոր ուղի է Պարսից ծոցից և Իրաքից դեպի Եվրոպա գազ և նավթ արտահանելու համար¹: Նույն հողվածում նաև նշվում է, որ Հայոց ցեղասպանության խնդիրը լուրջ կնճիռ է թուրք-ամերիկյան հարաբերություններում և ըստ այդմ կոչ է անում Կոնգրեսին չընդունել Ներկայացուցիչների պալատի առաջադրած 106-րդ բանաձևը, որը սոր խոչընդոտ կստեղծի թուրք-ամերիկյան հարաբերություններում. «Մենք խորհուրդ ենք տալիս Թուրքիային կարգավորել իր հարաբերությունները Հայաստանի հետ և բացել միջպետական սահմանը, ինչը խաղաղություն, զարգացում և համագործակցություն կբերի Հարավկովկասյան տարածաշրջանին»²:

Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգներում առկա ադրբեջանական կառույցներին, ապա այստեղ գործում է 16 համայնքային կազմակերպություն: Սրանցից թերևս աչքի է ընկնում 1957 թ. Նյու Ջերսի նահանգում ստեղծված «ԱՄՆ-ի ադրբեջանական համայնք» (ASA) լոբբիստական կազմակերպությունը, որի ղեկավարը այժմ Թոմրիս Ազերին է, իսկ կառույցի կենտրոնակայանը գտնվում է Նյու Յորքում: «Թեև ԱՄՆ ադրբեջանական լոբբին դեռ աճում և զարգանում է, մենք ջանքեր ենք գործադրում, որպեսզի նույնքան կարևոր լինենք, որքան հրեական կամ թուրքական լոբբիները: Ձգտում ենք կառուցել ուժեղ և ազդու լոբբի, որը համեմատելի և արդյունավետ կլինի, ինչպես ԱՄՆ-ի մյուս եթնիկ միությունները», - նշում է Ազերին³: Պարզ է, որ մյուս եթնիկ միություններ ասելով՝ նկատի ունի առաջին հերթին հայկականը:

Երկարաժամկետ առումով Ադրբեջանն իր առջև խնդիր է դրել բարձրացնել ադրբեջանականաստ տեղեկատվություն Արցախյան հակամարտության վերաբերյալ, մասնավորապես Արցախյան պատերազմում կրած պարտությունը ներակայացնելով Ադրբեջանի տարածքային ամբողջականության կորուստ: Նրա լոբբիստական ակցիաները ուղղված են Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնմանը, բարձրաձայնելու խոջալուի դեպքերը, որ ներկայացնում է որպես ցեղասպանություն⁴:

Ադրբեջանցիները հսկայական միջոցներ են ծախսում, որ ԱՄՆ-ն աչք փակի Ադրբեջանում մարդու իրավունքների խախտման, ժողովրդավարության ցածր մակարդակի և ներքաղաքական այլ բացթողումների վրա, որը, սակայն, դատապարտվել է ձախողման:

Ստորև ներկայացված գծապատկերում ցույց է տրված 1985-2002 թվականներին հայկական և ադրբեջանական շահախնդրությունների քննարկման արդյունքները ամերիկյան Կոնգրեսում⁵:

¹ St'u Burns N., The future of the US-Turkey relationship, Washington DC, 2007, p. 2:


² Նույնը, էջ 6:

³ St'u նույնը, էջ 138:

⁴ St'u <http://www.times.am/?p=37683&l=am>:

⁵ David King, Miles Pomper, David King, Miles Pomper, The U.S. Congress and the contingent influence of diaspora lobbies: Lessons from U.S. policy toward Armenia and Azerbaijan, Journal of Armenian studies, Cambridge, 2004, p. 6:

*Հայկական և ադրբեջանական
շահախնդրությունների քննարկումը
Ամերիկյան Կոնգրեսում*



ԱՄՆ Արդարադատության նախարարության՝ 2008 թ. լրբփստական գործու- նեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունում նշվում է, որ «*հյուսիսակ Լեռնարդ Սքեթչեր Անշիեյթս*» ընկերությունը Ադրբեջանի ԱԳՆ-ից ձեռք է բերել 41,6 հազար դոլար՝ ԱՄՆ հասարակայնության հետ կապերի ամրապնդման նպատակնե- րով, «*ՋՄ*» ընկերությունը Ադրբեջանի Միջազգային բանկից ստացել է 167,8 հազար դոլար՝ ՉԼՍ-ի հետ կապը զարգացնելու համար: «*Լիվինգստոն Գրուպ*» ընկերությու- նը երկրի ԱԳՆ-ից ստացել է 325 հազար դոլար՝ Կոնգրեսի անդամների հետ քաղա- քական խորհրդակցություններ, ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների զար- գացման և այլ միջոցառումների կազմակերպման նպատակով: ԱՄՆ Արդարադա- տության նախարարության հաշվետվությունում նշվում է, որ 2008 թվականին ԱՄՆ- ում Ադրբեջանի դեսպանատունը «*Մելվոդ Բոմուսիթեյշնս*» ընկերությանը փոխանցել է որոշակի գումար Ադրբեջանի շահերին համապատասխան ռազմավարություն մշակելու համար: Իսկ Ադրբեջանի գլխավոր հյուպատոսությունը «*Միթրիք և Բոմկինի*» ընկերությանը տրամադրել է 8,9 հազար դոլար՝ Լոս Անջելեսի ՉԼՍ-ի հետ կապը կազմակերպելու:

Միացյալ Նահանգներում գործող թուրքական և ադրբեջանական լրբփստական խմբերը, սերտ հարաբերություններ հաստատելով միմյանց և ԱՄՆ-ի իշխանության գործադիր ու օրենսդիր մարմինների հետ, ակտիվ, հետևողական լրբփստական քաղաքականություն են իրականացնում ԱՄՆ հայության, ԶԶ-ի ու Արցախի դեմ:

2008 թվականի փետրվարի 25-ին Նյու Յորքի թուրքական հյուպատոսությունում կազմակերպված արարողության ժամանակ Ազերին նշել է. «Տեսե՛ք, թե ինչպես են կազմակերպված ԱՄՆ-ի հայերը. երկու միլիոնանոց հայ համայնքի 50 հազարն են ակտիվ, որոնք կարողանում են իրենց ձայնը լսեցնել ողջ աշխարհին: Նույնը պետք է կարողանան անել նաև թուրքերը»¹:

2007 թվականին գրանցվում է «ԱՄՆ-ի ադրբեջանցիների ցանց» (US Azeris Net work-USAN) կազմակերպությունը: 2009 թվականին USAN անդամները 1345 նամակ են ուղարկում Կոնգրեսի անդամներին՝ երախտագիտություն հայտնելով Ադրբեջանին

¹ David King, Miles Pomper, David King, Miles Pomper, men. w., p. 139:

հատկացվելիք օժանդակության համար և մոտ 8000 նամակ՝ Կոնգրեսի զույգ պալատների ֆինանսական հատկացումների կոմիտեների անդամներին: Մինչ այդ USAN-ը գործադիր տնօրենի անունից նամակներ էր ուղարկում Կոնգրեսի աշխատակազմի գրեթե բոլոր աշխատակիցներին՝ բողոքներ հայտնելով հայկական լրբքի գործողությունների առիթով: «Մենք կարող ենք շատ արդյունքների հասնել և պայքարել նույնիսկ այնպիսի հզոր մրցակիցների հետ, ինչպիսին հայկական համայնքն է և իր լրբքին», - նշել է կառույցի գործադիր տնօրեն Ադիլ Բադիրովը¹:

Կառույցը փորձում է աշխատանք տանել Կոնգրեսի հայկական հանձնախմբի և այլ հարթություններում հանդես եկող հայանպաստ գործիչների հետ: Ի դեպ, ուշագրավ է, որ Կոնգրեսի ադրբեջանական հարցերով հանձնախմբի անդամ Ռենդի Քուհլը, եթե նախկինում աջակցում էր Մեծ եղեռնի օրինագծին, ապա շուտով փոխում է իր դիրքորոշումը և Կոնգրեսի 110-րդ գումարման նստաշրջանում դառնում «Ադրբեջանի բարեկամ»: Հատկանշական է, որ 2008 թ. սկզբին, երբ Բարաք Օբաման դեռ չէր համարվում ԱՄՆ նախագահի հավանական թեկնածու և տանուլ էր տալիս նախնական ընտրություններում, «Usazeris.org» կայքն քարոզարշավ էր տանում նրա դեմ: Կայքում տեղադրվում է երկու նամակ, որոնցում դատապարտում էին սենատոր Օբամային Ղարաբաղի ինքնորոշման և Մեծ եղեռնը ճանաչելու մասին դրական արտահայտվելու համար: Առաջինում նշված էր, որ «Օբամայի հայտարարությունները վիրավորում են բոլոր ամերիկաբնակ ադրբեջանցիներին և թուրքերին ու ԱՄՆ դաշնակիցներ Ադրբեջանին և Թուրքիային»: Ադրբեջանցիները նշում էին, թե «Օբամայի մոտեցումները փաստում են նրա անփորձությունը և դատողությունների մակերեսայնությունը, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքական հարցերով խորհրդակցանքների ոչ պրոֆեսիոնալիզմը»: Հայաստանի հանդեպ թուրք-ադրբեջանական շրջափակման առիթով Օբամայի քննադատական մոտեցումներին ամերիկաբնակ ադրբեջանցիները պատասխանել էին, որ Հայաստանը շրջափակման մեջ չէ, իսկ օրինակ, Նախիջևանը շրջափակված է արդեն մոտ քսան տարի: «Չկա Ադրբեջանի կամ Թուրքիայի կողմից Հայաստանի և ոչ մի շրջափակում, դա պարզապես տնտեսական պատժամիջոց է: Մինչդեռ Հայաստանը, իրոք, 1989 թվականից շրջափակել և նույնիսկ մասամբ գրավել է Նախիջևանի տարածքը, որը 300 հազարանոց բնակչությամբ ադրբեջանական շրջան է», - հորինել էին կայքի աշխատակիցները²:

Նշենք, որ ադրբեջանական կազմակերպություններ են գործում նաև հայաշատ Կալիֆորնիայում: Լոս Անջելեսում Ադրբեջանի հյուպատոս Էմիլ Սուլեյմանովը նշում է. «Իհարկե, Կալիֆորնիան ներկայացված է սովոր հայկական համայնքով: Այս պատճառով երկար ժամանակ այստեղ գերիշխում էին հայկական դիրքորոշումները: Մեր նպատակներից մեկն է ներկայացնել ադրբեջանական մոտեցումները»³:

Ակնհայտ է, որ ԱՄՆ-ում հայկական համայնքի առավելապես ինտեգրված լինելու, ամերիկահայության շրջանում գործող որոշակի ավանդույթների, համահայկական ընդգրկում ունեցող մի շարք կառույցների (Հայ Առաքելական եկեղեցի, ՀՀԴ, ՀԲԸՍ) առկայության պայմաններում Բաթլի, ինչպես նաև Անկարայի համար զգալիորեն

¹ St'u Azerbaydjan: organizatsiya diaspori pytaetsya protivodeystvovat' vliyaniyu armenio-amerikanskogo lobbi v Vashingtone, www.russian.eurasianet.org:

² Նահապետյան Հ., նշվ. աշխ., էջ 142:

³ Նահապետյան Հ., նշվ. աշխ., էջ 146:

բարդանում է Հայկական սփյուռքին հակակշռելու գերխնդիրը: Այլ հարց է, որ նշված իրավիճակը կարող է չզործել այլ պետությունների պարագայում, որտեղ Թուրքիան ու Ադրբեջանը հավելյալ հնարավորություն ունեն:

ԱՄՆ-ում ադրբեջանական կողմի հակահայ լրբբիստական աշխատանք պետք է դիտարկել Նևադայի նահանգապետ Ջիմ Գիբոնսի կողմից 2009 թվականի մարտի 31-ը որպես «1918 թվականին զոհված ադրբեջանցիների հիշատակի օր» հռչակելու նախաձեռնությունը: Այս առիթով ներկայացնենք Լոս Անջելեսի հայկական հյուպատոսության աշխատակցուհի և լրագրող Նաիրա Մանուչարովայի հրապարակումը. «Չանգահարելով Գիբոնսի գրասենյակ՝ մենք հետաքրքրվեցինք, թե ինչ հայտարարություն է ընդունել նահանգի ղեկավարը մարտի 31-ի առիթով: Նահանգապետի գրասենյակում, ի զարմանս մեզ, տեղյակ չէին ոչ միայն հայտարարությունից, այլ նաև Ադրբեջանից: Լսելով Ադրբեջան բառը՝ աշխատակցուհին հարցնում է. դա ինչ է, Հնդկաստանո՞ւմ է: Ստիպված էինք բացատրել, որ Ադրբեջանը Հնդկաստանում չէ, այլ Կովկասում, Կասպից ծովի ափին: Այնուհետև խնդրեցին տառ առ տառ արտասանել անհայտ երկրի անունը և աղբյուրը»: Ադրբեջանական աղբյուրներն ակնհայտ աղավաղել էին իրողությունը: Մասնավորապես ադրբեջանական հաղորդագրությունը վերնագրված էր «Ամերիկյան Նևադա նահանգում սուգ է հայտարարված ադրբեջանցիների ցեղասպանության առիթով», մինչդեռ սուգ հայտարարելու մասին խոսք չկար, հայտարարության մեջ նշված չէր նաև «ցեղասպանություն» եզրը¹:

ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբը և ՀՀ դիվանագիտական շրջանակները հակազդելով Գիբոնսին՝ նահանգապետարան են ներկայացնում ամերիկյան «Նյու Յորք Թայմս»-ի արխիվային հրապարակումները, որոնք ոչ միայն հակասում էին ընդունված հայտարարությանը, այլև փաստում էին ճիշտ հակառակը: USAN-ն, իր հերթին, կոչ է անում ադրբեջանցիներին նամակներ գրել Գիբոնսին՝ երախտիք հայտնելու: Հայտնի է նաև, որ երբ ադրբեջանական լրբբին նախաձեռնում է «change.org» կայքում ստորագրահավաք սկսել Խոջալուի դեպքերի ամերիկյան ճանաչման համար, շուրջ մեկ ամսվա ընթացքում արձագանքում է... հազիվ 200 քաղաքացի: Դա մոտ կրկնակի պակաս էր նույն կայքում հանուն Հայոց ցեղասպանության ամերիկյան ճանաչման ընդամենը մեկ օրում ստացվող արձագանքներից:

2004 թ. մարտի 25-ին ԱՄՆ Կոնգրեսում գրանցվում է Ադրբեջանի հարցերով կոնգրեսական հանձնախումբը, որը կոչվում է Ադրբեջանի բարեկամների խումբ: Համանախագահներն էին դեմոկրատական Սոլոմոն Օրթիսը (Տեխաս) և հանրապետական Զուրո Ռելդոնը (Փենսիլվանիա), որին ավելի ուշ փոխարինում է նույնպես Փենսիլվանիայից հանրապետական Բիլ Շուսթերը: Ադրբեջանը ԱՊՀ տարածքում Հայաստանից և Ուկրաինայից հետո դառնում է երրորդ երկիրը, որի օգտին Կոնգրեսում ձևավորվում է աշխատանքային խումբ:

Այդ խումբը վերջին մի քանի տարիների ընթացքում սկսել է ակտիվ լրբբիստական աշխատանք ծավալել այսպես կոչված «խոջալուի դեպքերի» իրավաքաղաքական շահարկման ուղղությամբ:

Առաջինը Կոնգրեսում Խոջալուի մասին բարձրաձայնել է Դեն Բարթոնը (Ինդիանա նահանգ): 2005 թ. փետրվարի 18-ին նա հայտարարում է, թե «վիճելի Հայոց

¹ Տե՛ս նույնը, էջ 148:

ցեղասպանությունը ճանաչելու կոչ անող կոնգրեսականները չեն անդրադառնում հայերի կողմից իրականացված ադրբեջանցիների էթնիկ զտումների խնդրին»: Արձանագրենք նաև, որ անցնող հինգ տարիների ընթացքում կոնգրեսականներից և ոչ մեկը խոջալուի դեպքերը չի բնորոշել որպես ցեղասպանություն: 2005 թ. հունիսին Դեն Բարթոնը ևս մեկ անգամ Ներկայացուցիչների պալատում բարձրաձայնում է ադրբեջանական այդ կեղծ թեզը՝ խոսելով Արցախի պատմական պատկանելիության խնդրի շուրջ. «Որքանով ես տեղյակ եմ, Լեռնային Ղարաբաղը երբևէ չի հանդիսացել Հայաստանի բաղկացուցիչը», - նշել է կոնգրեսականը:

2007 թվականի փետրվարի 15-ին խոջալուի դեպքերի առիթով հանդես են գալիս նաև կոնգրեսականներ Բիլ Շուսթերը, 2008 թ.՝ Սոլումոն Օրթոսը և Վիրջինիա Ֆոքսը: Օրթոսի ելույթը հազեցած էր հակահայ ձևակերպումներով, կոշտ մեղադրական և կեղծ փաստարկներով ու թվականներով: Ադրբեջանական հանձնախմբի անդամ, հանրապետական Վիրջինիա Ֆոքսը կոչ էր անում կոնգրեսականներին «Սոմալիի, Ռուանդայի, Բոսնիայի, Դարֆուրի իրադարձությունների կողքին լուսաբանել 1992 թվականի փետրվարի 25-26-ին տեղի ունեցած «խոջալուի դեպքերը»¹:

Եթե ԱՄՆ-ում գործող ադրբեջանաձայն լրբբի իրականացնող կազմակերպությունների գործունեությունը դիտարկենք ներդրված միջոցների և ստացած արդյունքների տեսանկյունից, ապա կարող ենք փաստել, որ արդյունավետությունը բավականին ցածր է: Ադրբեջանը հսկայական միջոցներ է ներդնում որոշակի միջոցառումների կազմակերպման համար, որոնց մասնակցում են հիմնականում ամերիկյան քաղաքականությունից հեռացած և քաղաքական որոշումների վրա ազդելու բավարար կշիռ չունեցող գործիչներ: Ադրբեջանը տասնյակ հազարավոր դուլարներ է ծախսում նաև ամերիկյան տեղեկատվական դաշտում Ադրբեջանի իմիջը բարձրացնող, հակահայկական նյութեր հրապարակելու համար: Այս ամենը, բնականաբար, ազդեցություն է թողնում այն զանգվածի վրա, որը տեղեկություն չունի Հայաստանի վերաբերյալ և Ադրբեջանի մատուցած տեղեկատվությունը դառնում է առաջին աղբյուր:

Պետք է նշել, որ ակտիվ տեմպերով տեղեկատվական դաշտի գրավմամբ Ադրբեջանը իրեն ներկայացնում է որպես հայերի կողմից ցեղասպանված պետություն, որի ձեռքից վերցրել են իր տարածքների մի մասը:

Ադրբեջանական հանձնախմբի առաջնահերթ խնդիրների շարքում է նաև թիվ 907 բանաձևին դիմագրավելը, որը, ինչպես հայտնի է, արգելափակում է ԱՄՆ-ի կառավարական օգնությունը Ադրբեջանին²: 907-ի վերջնական վերացման անհրաժեշտության օգտին արտահայտվում են կոնգրեսականներ Բիլ Շուսթերը, Սեմ Բրաունբեքը, ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպան Յաշար Ալիևը: Շուսթերը նաև դեմ է արտահայտվում Արցախին ամերիկյան պետական օգնության հատկացմանը: Նշենք, որ նրանց ջանքերը լիակատար ձախողման են ենթարկվում, քանի որ նույն 2009 թվականին ԱՄՆ Կոնգրեսում արտաքին ֆինանսական օժանդակության հարցի քննարկման ժամանակ Հայ դատի հանձնախմբի նախաձեռնությամբ հաստատվում է առավել խիստ ձևակերպում 907 բանաձևի վերաբերյալ, որով ԱՄՆ նախագահին կոչ էր արվում 907 բանաձևի հանդեպ վերանայումներ կիրառելուց առաջ հարցը քննարկել ԱՄՆ Կոնգրեսի անդամների հետ:

¹ Տե՛ս Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, էջ 167:

² Տե՛ս Մարրեան Ը., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը և Հայկական հարցը (1900-2009), Պեյրուք, 2010, էջ 98-99:

2009 թ. փետրվարի 26-ին այսպես կոչված «խոջալուի դեպքերի» հարցը ԱՄՆ-ի Ներկայացիչների պալատում բարձրացվում է Թուրքիայի կոնգրեսական հանձնախմբի համանախագահ և ադրբեջանական հանձնախմբի անդամ Էդ Ուայթֆիլդը, որն իր ելույթում այդ դեպքերը որակում է որպես «մեծ ողբերգություն»:

Ուշադրության է արժանի նաև ադրբեջանական կողմի փորձը՝ մասնակցել Միացյալ Նահանգներում ընթացող նախագահական ընտրություններին: 2004 թ. Բաբուն առաջին անգամ ձեռնարկեց ԱՄՆ ադրբեջանական համայնքի ներգրավումը ընտրական գործընթացին: ԱՄՆ ադրբեջանական համայնքը կողմնորոշվում է դեպի Ջորջ Բուշը: Պատճառը բավական ակնհայտ էր. Ջոն Բերին հստակ հայանպաստ մոտեցումներ ուներ:

Նշենք, որ 2008 թ. ընտրություններում ադրբեջանական համայնքը կողմնորոշվում է դեպի հանրապետական Ջոն Մակքեյը: Որպես դրա պատճառ նշվում էր վերջինիս այցը Ադրբեջան, Ցեղասպանության հիմնախնդրում առավել պասիվ դիրքորոշումը դեմոկրատ թեկնածուներ Բարաք Օբամայի և Հիլարի Զիլինթոնի համեմատությամբ: Նաև համարվում է, որ Հանրապետական կուսակցությունը համեմատաբար ավելի շատ է կողմնորոշված դեպի Թուրքիան, Ադրբեջանը, Էներգետիկ գործոնը:

Նշենք, որ վերոնշյալներից բացի ԱՄՆ-ում գործում են ադրբեջանական այլ հասարակական ու լոբբիստական այլ կառույցներ ևս, որոնցից են ԱՄՆ-Ադրբեջան կրթական և մշակութային հիմնադրամը, Ադրբեջան-ԱՄՆ մշակութային միությունը, Ադրբեջանական տունը, ԱՄՆ-Ադրբեջան փոխօգնության միությունը և այլն:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական լոբբին, ստանալով սեփական կառավարությունների քաղաքական ու ֆինանսական լայն օժանդակությունը, փորձում է ազդել ամերիկյան պետական շրջանակների վրա և պայթարել հայկական շահախնդրությունների դեմ:

Лиана Мамян, Турецко-Азербайджанский лобби в США и их борьба против армянских интересов, - В статье представлены турецко-азербайджанские лоббистские группы и их антиармянская деятельность.

Эти лоббистские группы финансируются местными правительствами и борются против принятия Армянского Геноцида Соединенными Штатами, в то же время желая сократить помощь, предоставленной Америкой Армении и НКР.

Следует отметить, что одним из важных среди их деятельности является укрепление отношения между США-Турция и США-Азербайджан.

Liana Mamyan, The Turkish-Azerbaijani lobby in the USA and their Struggle Against Armenian Interests, - The Turkish-Azerbaijani lobbying groups and their Anti-Armenian activities are deeply introduced in the article.

These lobbying groups are sponsored by their governments and are struggling against the recognition of the Armenian Genocide by The USA, at the same time taking into consideration the cease of The USA aid to the Republic of Armenia and NKR.

It is worth to mention, that one of their most important activities is the promotion of The USA-Turkey and The USA-Azerbaijan relations.

Լիանա Մամյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ կրթության և գիտության նախարարի օգնական:

